Փրկության ծրագիրը

Ի՞նչ է փրկության ծրագիրը:

Փրկության ծրագիրը* Իր զավակների երջանկության համար նախատեսված Աստծո ծրագիրն է: Այն կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի Քավության վրա: Եթե հետևեք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին, դուք կգտնեք հարատև ներքին խաղաղություն այս կյանքում և հավերժական ուրախություն՝ մահից հետո:

Սովորելով փրկության ծրագիրը, դուք կգտնեք հետևյալ հարցերի պատասխանները. «Որտեղի՞ց եմ ես եկել: Ո՞րն է կյանքում իմ նպատակը: Ո՞ւր կգնամ ես այս կյանքից հետո»:

Որտեղի՞ց եմ ես եկել:

Ձեր կյանքը չի սկսվել ծնունդով, ոչ էլ կավարտվի մահով: Դուք կազմված եք հոգևոր մարմնից (որը կոչվում է հոգի) և ֆիզիկական մարմնից: Ձեր Երկնային Հայրը ստեղծել է ձեր հոգին, և նախքան երկրի վրա ծնվելը, դուք որպես հոգի ապրել եք Նրա հետ: Դուք ճանաչում և սիրում էիք Նրան, և Նա ճանաչում ու սիրում էր ձեզ: Այդ ժամանակահատվածը կոչվում է նախաերկրային կյանք:

> «[Փրկության] ծրագիրը . . . նախապատրաստված էր աշխարհի հիմնադրումից ի վեր, Քրիստոսի միջոցով, բոլորի համար, ովքեր կհավատային նրա անունին»:
>
> **Ալմա 22.13**

Նախաերկրային կյանքի ընթացում դուք ուսուցանվել եք երջանկություն պարգևող սկզբունքներն ու պատվիրանները: Դուք աճել եք ձեր բանականության մեջ և սովորել եք սիրել ճշմարտությունը: Ձեզ ուսուցանվել է փրկության ծրագիրը: Նախաերկրային կյանքում Հիսուս Քրիստոսն ընտրվեց որպես Փրկիչ, դուք սովորեցիք, որ Նրա միջոցով կկարողանաք հաղթահարել ձեր սխալ ընտրությունների հետևանքները:

Ձեզ համար Աստծո ծրագրի կարևոր մասն էր՝ գալ երկիր ստանալով ֆիզիկական մարմին և սովորել ճիշտ ընտրություններ կատարել: Դուք չպիտի հիշեիք Երկնային Հոր

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Ընտանիքը գտնվում է մեր Երկնային Հոր ծրագրի կենտրոնում:

ներկայությամբ ապրած ձեր կյանքը, սակայն Նա պետք է ձեզ տար ճիշտը սխալից տարբերելու ունակություն: Դուք կկարողանայիք զգալ Նրա սերն ու ճշմարտությունը: Ձեր փորձի ու փորձությունների միջոցով, դուք պետք է կարողանայիք սովորել հետևողականորեն ճիշտ ընտրություններ կատարել: Հիսուս Քրիստոսի օգնությամբ, դուք պետք է կարողանայիք վերադառնալ՝ ապրելու ձեր Երկնային Հոր հետ, երբ ավարտվեր ձեր կյանքը երկրի վրա:

Ձեր նախաերկրային կյանքում դուք սովորել եք, որ միայն ընտրելով հետևել Աստծո ծրագրին, դուք կկարողանաք ստանալ հարատև խաղաղություն և բավարարվածություն այս կյանքում և հավերժության մեջ: Որովհետև Նա սիրում է ձեզ, ձեր Երկնային Հայրը ձեզ տվել է ազատ կամք, կամ ընտրություններ կատարելու զորություն: Նա թույլ է տալիս ձեզ ընտրել՝ արդյո՞ք կկամենաք հետևել Իր ծրագրին և Տեր Հիսուս Քրիստոսին:

Սատանան՝ Աստծո հոգևոր զավակներից մեկը, ապստամբեց մեր Երկնային Հոր դեմ և չընդունեց Նրա ծրագիրը: Նա ցանկացավ ուժով ստիպել մեզ բոլորիս իր կամքը կատարել: Ցավոք, մեր Երկնային Հոր զավակներից շատերը հետևեցին Սատանային: Սատանան և նրա հետևորդները արտաքսվեցին Աստծո ներկայությունից և նրանց թույլ չտրվեց ծնվել երկրի վրա: Նրանք շարունակեցին գոյություն ունենալ որպես հոգիներ: Նրանք թշվառ վիճակում են, և ցանկանում են դուք էլ թշվառ լինեք: Նրանք գայթակղում են ձեզ և Աստծո բոլոր զավակներին անել այնպիսի բաներ, որոնք տխրություն են բերում և հաճելի չեն Աստծուն:

> *Թեև ձեզ չիշռում, սակայն նախքան այս երկիր գալը դուք ապրել եք Աստծո, ձեր երկնային Հոր, և Նրա որդու, Հիսուս Քրիստոսի ներկայությամբ: Դուք ուրախությունից բացականչում էիք, երբ արտոնություն տրվեց այս երկիր գալով մարմին ստանալ և հետևել Աստծո ծրագրին՝ ձեր երջանկության համար:*

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Մենք շատ բան պետք է սովորենք և շատ փորձ ձեռք բերենք այս կյանքի ընթացքում:

Նախաերկրային կյանքում դուք ընտրեցիք՝ հավատալ Հիսուս Քրիստոսին և հետևել Աստծո ծրագրին: Ձեր ընտրություններ-ի շնորհիվ դուք ծնվեցիք երկրի վրա: Այդ նույն ընտրություն-ները կատարելով դուք կարող եք գտնել խաղաղություն այս կյանքում և այս կյանքն ավարտելուց հետո վերադառնալ՝ ապրելու ձեր Երկնային Հոր հետ:

Ո՞րն է կյանքում իմ նպատակը:

Արարում և Անկում

Երկիրը ստեղծվեց մեր Երկնային Հոր զավակների համար որպես ապրելու ու փորձառություն ձեռք բերելու մի վայր: Ադամն ու Եվան երկիր եկած Աստծո առաջին զավակներն էին: Նրանք ապրում էին Եդեմի պարտեզ կոչվող վայրում, որտեղ դեռևս Աստծո ներկայության մեջ էին գտնվում:

Մեր Երկնային Հայրը Ադամին և Եվային ազատ կամք կամ ընտրելու ազատություն տվեց: Նա պատվիրեց նրանց չուտել բարին ու չարը գիտենալու ծառից: Այդ պատվիրանին հնա-զանդվել նշանակում էր մնալ պարտեզում, սակայն նրանք չէին կարող զարգացում ապրել՝ փորձառություններից ու դժվարություններից սովորելով: Սատանան գայթակղեց Ադամին և Եվային, որպեսզի ուտեն արգելված պտուղը, և նրանք որոշեցին ուտել այն: Դա Աստծո ծրագրի մի մասն էր: Իրենց որոշման արդյունքում նրանք ֆիզիկապես և հոգեպես հեռացան Աստծո ներկայությունից: Նրանք դարձան մահկա-նացու, այսինքն՝ մեղքին և մահվան ենթակա: Նրանք չէին կարող վերադառնալ Նրա մոտ առանց Նրա օգնության: Աստծուց նրանց ֆիզիկապես և հոգեպես առանձնացումը կոչվում է Անկում:

Երկնային Հայրը հրեշտակներ և Սուրբ Հոգին ուղարկեց՝ Ադամին և Եվային փրկության ծրագիրն ուսուցանելու հա-մար: Այդ ծրագրի առանցքը Հիսուս Քրիստոսի Քավությունն է, որը հնարավորություն է տալիս Աստծո զավակներին հաղ-թահարել Անկման ազդեցությունը և ուրախություն ունենալ այս կյանքում և հավերժության մեջ:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

«Եթե Ադամն օրինազանցությունն չաներ, նա չէր ընկնի, այլ նա կմնար Եդեմի պարտեզում . . .

Եվ [Ադամն ու Եվան] երեխաներ չէին ունենա. ուստի, նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն. չանելով բարիք, քանզի նրանք չգիտեին մեղքը:

Բայց, ահա, բոլոր բաներն արվել են նրա իմաստությամբ, ով գիտի բոլոր բաները:

Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:

2 Նեփի 2.22–25

Ձեր կյանքը երկրի վրա

Անկման պատճառով, դուք հեռացած եք Աստծուց թե ֆիզիկապես, և թե հոգեպես: Այս անջատումը Իր զավակների համար Աստծո ծրագրի մի մասն է: Նրա ներկայությունից երկիր գալու ձեր նպատակը ներառում է՝ մարմին ստանալը, փորձառություն ձեռք բերելը և ճիշտ ընտրություններ կատարելը:

> «Զավակն եմ ես Աստծո,
> Նա է ինձ կյանք տվել,
> Տվել է ինձ տուն երկրային,
> Եվ ծնողներ բարի:
> Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
> Որ ուղին գտնեմ,
> Սովորեցրու՝ ինձ ապել,
> Որ մի օր քեզ համնեմ»
>
> **Հիմներ, էջ 58**

Կյանքի շատ կողմեր երջանկություն են բերում, իսկ որոշները՝ տխրություն: Այդ փորձառություններն օգնում են ձեզ սովորել՝ տարբերել բարին չարից և ճիշտ ընտրություններ կատարել: Աստված ազդում է ձեզ վրա՝ կատարել բարին և հետևել Նրան, մինչդեռ Սատանան գայթակղում է ձեզ՝ անտեսել Աստծուն և մեղք գործել: (Մեղքը գիտակցաբար սխալ գործելն է): Երբ դուք ընտրում եք հետևել Աստծուն և պահել Նրա պատվիրանները, դուք աճում եք իմաստության մեջ և ամրացնում ձեր քնավորությունը: Դուք կարող եք ուրախություն ապրել, անգամ փորձության պահերին, և դուք կարող եք կյանքի դժվարություններին դիմակայել խաղաղ հոգով:

Դուք շատ լավ ընտրություններ եք կատարել ձեր կյանքում, սակայն նաև կատարել եք որոշ սխալ ընտրություններ: Երբ սխալ ընտրություններ եք կատարում և մեղք եք գործում, դուք որոշ չափով ձեզ հեռացնում եք Աստծուց: Սուրբ գրությունները այդ հեռացումը անվանում են հոգևոր մահ: Աստծուց ձեզ հեռացնելուց բացի, մեղքը նաև մեղավորության և ամոթի զգացում է առաջացնում: Դուք չեք կարող ինքնուրույն հաղթահարել մեղքը և դրա հետևանքները:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Մենք պետք է ուշադիր լինենք մեր ընտրությունների հարցում:

Հիսուս Քրիստոսի Քավությունը

Քանի որ ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ, նա ուղարկեց Իր Որդուն, Հիսուս Քրիստոսին, վճարելու ձեր մեղքերի համար: Այդ վճարը Հիսուս Քրիստոսի Քավության մի մասն է:

> «ՈՐՈՎՀԵՏև ԱՍՏՎԱԾ ԱՅՆՊԵՍ ՍԻՐԵՑ ԱՇԽԱՐՀԸ, ՈՐ ԻՐ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՆ ՏՈՒԱՎ. ՈՐ ԱՄԵՆ ՆՈՐԱՆ ՀԱՎԱՏԱՑՈՂԸ ՉԿՈՐՉԻ, ԱՅԼ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ՈՒՆԵՆԱ»
>
> **Հովհաննես 3.16**

Հիսուս Քրիստոսը կամովին տառապեց ձեր մեղքերի, ցավերի, հիվանդությունների ու վշտերի համար: Իր շնորհով ու ողորմածությամբ Նա կարող է օգնել ձեզ ձեր փորձություններում և ազատել ձեզ ձեր մեղքերի արդյունքում ունեցած մեղավորության ու ամոթի զգացումից:

Ձեր մեղքերի համար վճարելով, Հիսուսը չի վերացնում ձեր ազատ կամքը կամ անձնական պատասխանատվությունը. Նա ձեզ չի մաքրի ձեր կամքի հակառակ: Նրա օգնությունն ու զորությունը ստանալու համար դուք պետք է Նրան հավատաք, ապաշխարեք, մկրտվեք, ստանաք Սուրբ Հոգին, և ընտրեք ձեր հետագա կյանքում Նրա ուսմունքներին հետևելը: Քավությանն ապավինելով դուք կզգաք Աստծո սերը, և Նա կօգնի ձեզ դիմակայել ձեր փորձություններին: Դուք կունենաք ուրախություն, խաղաղություն և սփոփում: Կյանքում անարդար թվացող ամեն բան կարելի է շտկել Հիսուս Քրիստոսի Քավությամբ, ողորմածությամբ ու մեր Երկնային Հոր սիրով: Քավությունը փրկության ծրագրի հիմնական կետն է:

Ո՞ւր կգնամ ես այս կյանքից հետո:

Երկրային տեսակետից, ֆիզիկական մահը, թվում է, վերջն է, սակայն իրականում դա սկիզբն է՝ մեկ քայլ առաջ մեր Երկնային Հոր ծրագրում: Մահվան ժամանակ ձեր հոգին հեռանում է մարմնից և գնում հոգևոր աշխարհ, որը ուսանելու և պատրաստվելու վայր է: Հոգևոր աշխարհում այս կյանքի մասին ձեր հիշողությունը կմնա ձեզ հետ:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Փրկիչը Գեթսեմանի պարտեզում տառապեց մեր մեղքերի համար:

ՄԱՀՎԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՁԵՐ ՀՈԳԻՆ ԹՈՂՆՈՒՄ Է ՁԵՐ ՄԱՐՄԻՆԸ և ԳՆՈՒՄ Է ՀՈԳևՈՐ ԱՇԽԱՐՀ, ՈՐԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ, ՍՈՎՈՐԵԼՈՒ և ՀՈԳՍԻՑ ՈՒ ՎՇՏԻՑ ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ՄԻ ՎԱՅՐ Է:

Մահը չի փոխի ձեր անհատականությունը կամ բարու ու չարի հանդեպ ձեր ցանկությունը: Եթե դուք ընտրում եք երկրի վրա ձեր կյանքի ընթացքում հետևել Քրիստոսին, հոգևոր աշխարհում դուք խաղաղություն կունենաք և կհանգստանաք ձեր հոգսերից: Նրանք, ովքեր ընտրում են չհետևել Հիսուս Քրիստոսին և չեն ապաշխարում, դժբախտ կլինեն:

Մեր Երկնային Հայրը գիտեր, որ Իր զավակներից շատերը այս կյանքի ընթացքում երբեք հնարավորություն չեն ունենա սովորել Հիսուս Քրիստոսի մասին, իսկ ոմանք էլ կընտրեն՝ չհետևել Նրան: Քանի որ Աստված սիրում է Իր զավակներին, Նա հոգևոր աշխարհում հնարավորություն է տալիս, որպեսզի նրանք սովորեն Իր ծրագրի մասին, հավատան Հիսուս Քրիստոսին, և ապաշխարեն: Նրանք, ովքեր ընդունում և հետևում են Հիսուս Քրիստոսին, խաղաղություն և հանգիստ կունենան:

Հարություն և Դատաստան

Աստծո ամենամեծ պարգևներից մեկը բոլորին, ովքեր գալիս են աշխարհ, հարությունն է, որը հնարավոր է դարձել Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Երբ Հիսուսը մահացավ խաչի վրա, Նրա հոգին գնաց հոգևոր աշխարհ: Երեք օր անց, Նրա հոգին վերամիավորվեց Իր փառավորված, կատարյալ մարմնի հետ, որն այլևս չէր կարող մահանալ: Մարմնի ու հոգու այդ վերամիավորումը կոչվում է *հարություն*: Ամեն ոք, ով ծնվում է երկրի վրա, հարություն կառնի:

Հարություն առնելուց հետո, դուք կգնաք Աստծո առաջ դատվելու՝ ըստ ձեր գործերի և ձեր սրտի ցանկությունների:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Հարություն առած Փրկիչը հայտնվեց Մարիամին:

Փառքի աստիճանները

Դատվելուց հետո, դուք կապրեք փառքի վիճակում: Քանի որ յուրաքանչյուրի գործերն ու ցանկությունները տարբեր են, երկինքը բաղկացած է տարբեր թագավորություններից, կամ փառքի աստիճաններից:

Սելեստիալ թագավորություն: Մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ապրում են սելեստիալ թագավորությունում: Եթե դուք ապրում եք Հիսուս Քրիստոսի ավետարանի համաձայն և Քավությամբ մաքրագործվել եք մեղքից, դուք տեղ կունենաք այդ ամենաբարձր թագավորությունում: Դուք կապրեք Աստծո ներկայության մեջ և լիակատար ուրախություն կունենաք:

Թերեստրիալ թագավորություն: Այն մարդիկ, ովքեր հրաժարվում են ընդունել Հիսուս Քրիստոսի ավետարանը, սակայն ապրում են պատվավոր կյանքով, տեղ կստանան թերեստրիալ թագավորությունում:

Թելեստիալ թագավորություն: Նրանք, ովքեր շարունակում են մնալ իրենց մեղքի մեջ և չեն ապաշխարում, տեղ կստանան թելեստիալ թագավորությունում:

Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում փրկությունը:

Նախաերկրային կյանք	Երկրային կյանք		
	Արարում և Անկում	Հավատք առ Հիսուս Քրիստոս Ապաշխարություն Մկրտություն Սուրբ Հոգու պարգևը Դիմանալ մինչև վերջ	Ֆիզիկական մահ

Ի՞նչ նշանակություն ունի այդ ծրագիրն ինձ համար:

Երբ հասկանում եք, որ Աստված ձեր Հայրն է, որ Նա սիրում է ձեզ, և որ Նա հնարավոր է դարձրել ձեզ համար փորձառություն ու գիտելիք ստանալ այստեղ և դառնալ Նրա նման այս կյանքից հետո, դուք գիտակցում եք ձեր որոշումների կարևորությունը այս կյանքի ընթացքում: Դուք հասկանում եք, որ պետք է հետևեք Հիսուս Քրիստոսին, որպեսզի մեր Երկնային Հոր ծրագրի բոլոր օրհնությունները ստանաք:



Ինչպե՞ս կարող եմ ես իմանալ:

Փրկության ծրագրի մասին ավելի շատ գիտելիք եկել է Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման շնորհիվ:

Դուք ինքնուրույն կարող եք իմանալ, որ այս ամենը ճշմարիտ է, եթե աղոթքով դիմեք ձեր Երկնային Հորը: Սուրբ Հոգու միջոցով Նա կպատասխանի ձեզ: Սուրբ Հոգին նաև կոչվում է Աստծո Հոգի, և Նրա դերերից մեկը ճշմարտության մասին վկայելն է: Սուրբ Հոգին հաստատում է ճշմարտությունը զգացումների, մտքերի և ստացած տպավորությունների միջոցով: Ինչպես ուսուցանվում է Աստվածաշնչում. «Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, [և] ժուժկալություն» (Գաղատացիս Ե.22—23): Սուրբ Հոգուց եկած այդ զգացումները հաստատում են, որ տվյալ ուղերձը ճշմարիտ է: Այնուհետև դուք պետք է ընտրեք՝ արդյո՞ք կապրեք Զոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքների համաձայն:

ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԵՍ ԱՂՈԹԵՄ:

- *ԴԻՄԵՔ ՁԵՐ ԵՐԿՆԱՅԻՆ ՀՈՐԸ:*
- *ՀԱՅՏՆԵՔ ՁԵՐ ՍՐՏԻ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԸ (ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐՑԵՐԸ, ԽՆԴՐԵԼՈՎ ՀԱՍՏԱՏԵԼ, ՈՐ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ և ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆԱԾԸ ՃՇՄԱՐԻՏ Է):*
- *ՓԱԿԵՔ ԱՂՈԹՔԸ («ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ, ԱՄԵՆ»):*

Անկեղծ աղոթքի միջոցով դուք կարող եք իմանալ ճշմարտությունը:

Տերմինների ցանկ

Ազատ կամք Պարգև Աստծուց՝ բարու և չարի միջև, ճիշտ և սխալ որոշումներ կայացնելիս ընտրություն կատարելու համար:

Անկում Իրադարձություն, որով մարդիկ դարձան մահկանացու: Դրա արդյունքում տեղի ունեցավ հոգևոր և ֆիզիկական առանձնացում Աստծուց: Քանի որ առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան, չհնազանդվեցին Աստծո պատվիրաններին, նրանք հեռացվեցին Նրա ներկայությունից (այդ հեռացումը նաև կոչվում է հոգևոր մահ) և դարձան մահկանացու (ֆիզիկական մահվան ենթակա): Որպես Ադամի և Եվայի հետնորդներ, մենք ևս հեռացած ենք Աստծուց և ենթակա ենք ֆիզիկական մահվան: Հիսուս Քրիստոսի Քավությունը հաղթում է թե ֆիզիկական, և թե հոգևոր մահին:

Արարողություն Սրբազան, հաստատված կարգով կատարվող գործողություն, որը կատարվում է քահանայության իշանության կողմից: Օրինակ, մկրտությունը, Սուրբ Հոգու ստանալը և հաղորդությունը: Արարողությունները հաճախ Աստծո հետ ուխտի մեջ մտնելու միջոց են:

Հարություն Ֆիզիկական մահից հետո հոգու վերամիավորումը կատարյալ դարձած մսից ու ոսկորներից կազմված ֆիզիկական մարմնի հետ: Հիսուս Քրիստոսը առաջինն էր, որ հարություն առավ: Հարությունից հետո հոգին ու մարմինը երբեք այլևս չեն առանձնանա, և մարդը կապրի հավերժ: Ամեն ոք, ով ապրել է, Քավության շնորհիվ հարություն կառնի:

Հոգի Անձի մի մաս, որը նախքան ծնվելը ապրում էր Երկնային Հոր հետ: Երկրի վրա մեր կյանքի ընթացքում հոգին միացած է ֆիզիկական մարմնի հետ: Մահից հետո հոգին շարունակում է ապրել:

Հոգևոր աշխարհ Վայր, որտեղ մեր հոգիները գնում են մահի ու հարության միջև ընկած ժամանակահատվածում: Նրանց համար, ովքեր իրենց կյանքի ընթացքում արդարակյաց են եղել, հոգևոր աշխարհը կլինի խաղաղության և ուրախության վայր:

Հոգևոր մահ Աստծուց հեռացում՝ որպես Նրա պատվիրաններին չհնազանդվելու արդյունք: Մենք փրկվում ենք հոգևոր մահից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, երբ ապաշխարում ենք և պահում Նրա պատվիրանները:

Նախաերկրային կյանք Մեր կյանքը մինչև այս երկրի վրա մեր ծնունդը: Մեր նախաերկրային կյանքում մենք ապրել ենք մեր Երկնային Հոր ներկայության մեջ՝ որպես Նրա հոգևոր զավակներ: Մենք ֆիզիկական մարմիններ չունեինք:

Ենորի Աստվածային օգնություն և զորություն, որը տրվում է Հիսուս Քրիստոսի ողորմածության և սիրո շնորհիվ: Նրա շնորհով, որը հնարավոր դարձավ Նրա Քավության միջոցով, ողջ մարդկությունը հարություն կառնի: Նրա շնորհով, նրանք, ովքեր շարունակ ապաշխարում են և ապրում ըստ Նրա ավետարանի, մշտապես մոտ կզգան իրենց Երկնային Հորը այս կյանքում, իսկ այս կյանքից հետո կապրեն Նրա ներկայության մեջ:

Փրկություն Մեղքից ու մահից ազատում: Փրկությունը հնարավոր դարձավ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Հիսուս Քրիստոսի Հարության միջոցով ամեն ոք կհաղթահարի մահվան հետևանքները: Հավատալով Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք նաև փրկվել մեղքի ազդեցությունից: Այդ հավատքը կյանքում դրսևորվում է ապաշխարության, ավետարանի օրենքներին ու արարողություններին հնազանդվելու և Քրիստոսին ծառայելու միջոցով:

Փրկության ծրագիր Մեր Երկնային Հոր ծրագիրը, որը մեզ համար հնարավոր է դարձնում դառնալ Նրա պես և լիակատար ուրախություն ունենալ: Այս ծրագիրը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի Քավության վրա և ընդգրկում է ավետարանի բոլոր պատվիրանները, արարողությունները և ուսմունքները:

Քավություն Իրադարձություն, որը հնարավորություն է ընձեռում մեզ հաշտվել Աստծո հետ: Քավել նշանակում է պատիժ կրել մեղքի համար, որով ապաշխարող մեղսավորից հեռացվում է մեղքի ազդեցությունը: Հիսուս Քրիստոսը միակ մարդն էր, որը կարող էր կատարյալ Քավություն կատարել ողջ մարդկության համար: Նրա Քավությունը ընդգրկում էր Նրա տառապանքը մեր մեղքերի համար, Նրա արյուն հեղելը և Նրա մահն ու Հարությունը: Քավության շնորհիվ ամեն ոք, ով ապրել է, հարություն կառնի: Քավությունը նաև մեզ հնարավորություն է տալիս մեր մեղքերից թողություն ստանալ և հավերժ Աստծո հետ ապրել:

Ֆիզիկական մահ Մահկանացու մարմնից հոգու առանձնացումը: Երբ ֆիզիկական մարմինը մահանում է, հոգին շարունակում է ապրել հոգևոր աշխարհում: Մենք հաղթում ենք ֆիզիկական մահին հարության միջոցով, որը հնարավոր դարձավ Հիսուս Քրիստոսի Քավությամբ:

Լրացուցիչ ուսումնասիրություն

Հետևյալ հարցերն ու սուրբ գրությունները կօգնեն ձեզ ավելին սովորել այս բրոշյուրում տրված սկզբունքների մասին և խորհել դրանց շուրջ: Ցանկը ամբողջական չի. սուրբ գրությունների տողատակի ծանոթագրությունները և խաչաձև վկայակոչումները կուղղորդեն ձեզ լրացուցիչ հատվածներին ու աղբյուրներին:

Ինչպիսի՞ հարաբերություն եք ունեցել Աստծո հետ՝ նախքան ձեր ծնունդը:

Երեմիա Ա.5 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)
Եբրայեցիս ԺԲ.9 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ի՞նչ է Անկումը: Ինչո՞ւ էր այն անհրաժեշտ:

2 Նեփի 2.14–26 (Մորմոնի Գիրք, էջ 59–60)
Ալմա 42.2–9 (Մորմոնի Գիրք, էջ 339)

Ո՞րն է ձեր կյանքի նպատակն այստեղ: Ինչպե՞ս կարող է այս գիտելիքն ազդել ձեր ամենօրյա կայացրած որոշումների վրա:

2 Նեփի 2.25–27 (Մորմոնի Գիրք, էջ 60)
Ալմա 34.32 (Մորմոնի Գիրք, էջ 321)

Ի՞նչ է Քավությունը: Ինչպե՞ս կարող է այն օգնել ձեզ՝ ձեր առօրյա կյանքում:

Հովհաննես Գ.16–17 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Հռովմայեցիս Գ.23–25 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
2 Նեփի 2.6–8 (Մորմոնի Գիրք, էջ 58)
Ալմա 7.11–12 (Մորմոնի Գիրք, էջ 237–238)
Ալմա 42.22–23 (Մորմոնի Գիրք, էջ 340–341)

Ի՞նչ է հոգևոր աշխարհը: Ի՞նչ է կատարվում այնտեղ:

Ա Պետրոս Դ.6 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Ալմա 40.11–14 (Մորմոնի Գիրք, էջ 335–336)

Ի՞նչ է նշանակում հարություն առնել: Ո՞վ հարություն կառնի: Ինչո՞ւ է հարությունը կարևոր:

2 Նեփի 9.13–15 (Մորմոնի Գիրք, էջ 74)
Ալմա 11.42–45 (Մորմոնի Գիրք, էջ 251)

Ի՞նչ է երկինքը: Ինչո՞ւ է այն բաժանված փառքի տարբեր աստիճանների:

Ա Կորնթացիս ԺԵ.40–43 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Երկրպագեք մեզ հետ

Եկեք և տեսեք, թե ինչպես կարող է Վերականգնված Ավետարանն օրհնել ձեր կյանքը

Հաղորդության ժողովը երկրպագության հիմնական ծառայությունն է: Այն սովորաբար տևում է մեկ ժամից մի փոքր ավել և հիմնականում բաղկացած է հետևյալ մասերից.

Օրհներգեր. Երգում են ներկա գտնվողները: (Հիմների գրքերը տրամադրվում են:)

Աղոթքներ. Ասվում են Եկեղեցու տեղի անդամների կողմից:

Հաղորդություն. Հացն ու ջուրն օրհնվում և բաժանվում է ներկաներին՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության:

Բանախոսներ. Սովորաբար նախապես նշանակված մեկ կամ երկու անդամներ խոսում են ավետարանի թեմաներով:

Հագուստ. Տղամարդիկ և տղաները հիմնականում հագնում են կոստյում կամ գեղեցիկ տաբատ, վերնաշապիկ և փողկապ: Կանայք և աղջիկները հագնում են զգեստ կամ կիսաշրջազգեստ:

Երկրպագության ծառայությունների ընթացքում նվիրատվություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

Մենք նաև հրավիրում ենք ձեզ հաճախել մյուս ժողովներին, ըստ ձեր հետաքրքրությունների և տարիքային խմբի: Այդ ժողովների հերթականությունն ու առկայությունը կարող է տարբեր լինել:

Կիրակնօրյա Դպրոց. Դասեր սուրբ գրություններն ու ավետարանի վարդապետություններն ուսումնասիրելու համար:

Քահանայության Ժողովներ. Դասեր 12 և բարձր տարիքի տղամարդկանց և տղաների համար:

Սփոփող Միություն. Դասեր 18 և բարձր տարիքի կանանց համար:

Երիտասարդ Կանայք. Դասեր 12–18 տարեկան աղջիկների համար:

Երեխաների Խումբ. Խմբային դասեր 3–11 տարեկան երեխաների համար: 18 ամսականից մինչև 3 տարեկան երեխաների համար հաճախ գործում է մանկական սենյակը:

Հաղորդության ժողովի ժամերը. _____

Հավաքատան հասցեն. _____

_____

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԵՍ ԱՆԵՄ:

- ԿԱՐԴԱՑԵՔ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ:
  ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: _____

- ԱՂՈԹԵՔ՝ ԻՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆԱԾԸ ՃՇՄԱՐԻՏ Է:

- ՀԱՃԱԽԵՔ ԵԿԵՂԵՑԻ:

- ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՄԿՐՏՎԵԼ _____

- ԱՅՑԵԼԵՔ WWW.MORMON.ORG ԻՐ ՁԱՎԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԿՆԱՅԻՆ ՀՈՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՀԱՆԴԻՊԵԼ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻՆ՝ ՄԵՐ ՕՐԵՐԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՍՏԾՈ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

  ՀԱՋՈՐԴ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ. _____

  ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

www.mormon.org

Նկարներ
Կազմի առաջին էջը՝ Հատված *Նա հարություն առավ* նկարից, Դել Փարսոնի © Del Parson. Մի բազմացրեք:
էջ 11՝ Հատված *Քրիստոսը Գեթսեմանում* նկարից, Հարի Անդերսոնի
էջ 13՝ *Նա հարություն առավ*, Գրեգ Օլսեն: © Greg Olsen. Մի բազմացրեք
էջեր 4, 22, 23 Marina Lukach

© 2006 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in Germany.
Անգլերենի հաստատումը՝ 11/05: Թարգմանության հաստատումը՝ 11/05: *The Plan of Salvation*-ի թարգմանությունը: Armenian.

ARMENIAN
4 02011 33201 7
01133 201